

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Ներքին աուդիտի բաժնի կողմից
01.01.2014թ. դրությամբ կատարված աշխատանքների մասին»

2013թ. տարեկան ծրագրի շրջանակներում «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է թվով 50 աուդիտ, որից մարզային ենթակայության կրթական 38 ՊՈԱԿ-ներում/հանրահաշվական հաշվարկների ստուգում, առանձին գործառույթների իրականացման և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում դրանց արտացոլման կանոնների պահպանման ստուգում, ֆինանսական հաշվետվությունների կազմման, աշխատավարձ և դրան հավասարեցված վճարների հաշվարկման և վճարման ճշտության աուդիտ, հաշվապահական գրանցումներում՝ առաջնային փաստաթղթերում առկա տեղեկատվության արտացոլման հետազննում/ առողջապահական 8 ընկերություններում /գնումների գործընթացի համապատասխանությունը «Գնումների մասին» « օրենքի պահանջներին/ և «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում /ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը առնչվող գործառույթներ/:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի երեք նիստ, քննարկվել են աուդիտորական հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տված մի շարք ՊՈԱԿ-ների տնօրեններ և հաշվապահներ ենթարկվել են կարգապահական տույժերի՝ մասնավորապես 1 տնօրեն ստացել է «նկատողություն», 9 հաշվապահ ստացել են «նկատողություն» և 1-ը՝ «խիստ նկատողություն»:

Աուդիտի ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները՝

1. նախահաշիվների, ծախսային և հաշվապահական հաշիվների, եկամտային հարկի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման հետ կապված խախտումներ,
2. գնումները կատարվել են «Գնումների մասին» « օրենքի պահանջներին ոչ համապատասխան,
3. դրամարկղային գործառնությունները իրականացվել են «Դրամարկղի վարման մասին» « օրենքի պահանջներին ոչ համապատասխան:

Մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ կատարված աուդիտի հիմքով կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց ընթացքում վեր են հանվել թերությունները, տրվել համապատասխան հանձնարարականներ և հսկողություն սահմանվել ՊՈԱԿ-ների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ: Ներքին աուդիտի բաժնի կողմից պարբերաբար ցուցաբերվել է մեթոդական օգնություն, իսկ արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր:

Արմավիրի մարզպետարանի
ներքին աուդիտի բաժնի պետ՝

Ա. ՀԱԿՈՒՅԱՆ